



HAL
open science

-
Gagik Harutyunyan

► **To cite this version:**

| Gagik Harutyunyan. - . 21st Century, 2010, 6 (34), pp.3-14. hal-03658438

HAL Id: hal-03658438

<https://hal.science/hal-03658438>

Submitted on 4 May 2022

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Public Domain

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈԻԼԸ**

Գազիկ Հարությունյան*

Հայ-ռուսական հարաբերությունները, չնայած իրենց ավանդական բնույթին, պատմական զարգացումներին զուգընթաց՝ մշտապես բովանդակային և ձևաչափային փոփոխություններ են կրել: Այդ տեսանկյունից համեմատաբար սակավ է ուսումնասիրված այդ հարաբերությունների ներկա փուլը, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրներն էլ հայտնվել են նոր աշխարհաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրողություններում: Ակնհայտ է, որ արդի ժամանակաշրջանին բնորոշ շարունակական փոփոխություններն առաջացնում են ինչպես հիմնախնդիրներ, այնպես էլ նոր հնարավորություններ կողմերի հարաբերությունների զարգացման համար: Հողվածում կդիտարկենք հայ-ռուսական ռազմավարական դաշինքի դերը մեր հանրությունների ընկալման և տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից, ինչպես նաև կներկայացնենք մոտեցումները, որոնք կարող են բարձրացնել համատեղ վարվող քաղաքականության արդյունավետությունը:

Թուրքիա. ՀՀ ազգային անվտանգության առաջնային խնդիրը. Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի օգոստոսյան այցը Երևան, որի արդյունքում երկարաձգվեց (մինչև 2044թ.) և նոր բովանդակություն ստացավ (այն ապահովելու է նաև ՀՀ անվտանգությունը) ռուսաստանյան ռազմակայանի վերաբերյալ պայմանագիրը, քաղաքական շրջանակներում լայն քննարկումների արժանացավ: Դրական արձագանքներին զուգահեռ՝ հայաստանյան ՁԼՄ-ում կարելի է հանդիպել նաև բացասական կարծիքների, համաձայն որոնց՝ այդ պայմանագիրը ոչ միայն չի համընկնում մեր ազգային շահերին, այլև զգալիորեն սահմանափակում է ՀՀ ինքնիշխանությունը: Միանշանակ չի կարելի գնահատել հայ-ռուսական պայմանագրի լուսաբանումը նաև ռուսաստանյան

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

տեղեկատվական դաշտում, որտեղ իրենց ռազմավարական դաշնակցի հետ հարաբերություններին նվիրված մեկնաբանություններն ավելի քան սակավ էին և գուսպ: Այդ ամենի առիթով փորձենք ներկայացնել որոշ փորձագիտական նկատառումներ, որոնք կնպաստեն խնդիրն ավելի համալիր ընկալելուն և, թերևս, ապագայում հայ – ռուսական հարաբերություններին առավել լիարժեք բնույթ հաղորդելուն:

ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմակայանի հիմնական նպատակը ՀՀ ռազմական անվտանգության ապահովումն է Թուրքիայի հնարավոր ագրեսիայից: Վերջինս ռազմական տեսանկյունից հզոր, արդիական զենքի տիրապետող և մեծաթիվ բանակ ունեցող պետություն է: Միայն թուրքական ցամաքային ուժերի թվաքանակը (որն ամենամեծն է ՆԱՏՕ-ում) կազմում է շուրջ 450 հազար զինծառայող՝ չհաշված ժանդարմերիայի ստորաբաժանումները: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ ՀՀ ՁՈւ ներուժն այսօր և տեսանելի ապագայում անհամադրելի է Թուրքիայի ՁՈւ-ի հետ:

Միևնույն ժամանակ, ռազմական խնդիրները կարևորվում են գլխավորապես քաղաքական համատեքստում, և անհրաժեշտ է գնահատել, թե որքանով է իրատեսական թուրքական ՁՈւ-ի սպառնալիքը ՀՀ անվտանգությանը: Այդ խնդրում, չանդրադառնալով ավելի վաղ պատմական նախադեպերին, դիտարկենք ԼՂՀ-ի շուրջ զարգացումներով պայմանավորված ժամանակաշրջանը:

Հայտնի է, որ Թուրքիան ԼՂՀ-ի շուրջ ընթացող հակամարտության փաստացի կողմ է, որը սկզբից առայսօր սպասարկում է Ադրբեջանին ռազմական տեխնիկայով և «խորհրդականներով» (նախկինում նաև՝ պատերազմական գործողություններին մասնակցող «կամավոր» զինծառայողներով): Սակայն թուրքական աջակցությունը դրանով չէր սահմանափակվում: 1992թ. գարնանը, երբ իրադրությունը Ղարաբաղյան ճակատում սկսեց փոխվել ի վնաս ադրբեջանցիների (մասնավորապես, ազատագրվեց Շուշին և բացվեց Լաչինի միջանցքը), Թուրքիան որոշեց անմիջականորեն միջամտել անցանկալի զարգացումներին և ռազմական հարձակում կատարել ՀՀ-ի վրա: Անկարան հայտարարեց, որ ՀՀ-ն Նախիջևանի դեմ ագրեսիա է պատրաստում, մինչդեռ համաձայն 1921թ. Կարսի պայմանագրի՝ Թուրքիան Նախիջևանի անվտանգության երաշխավորն է: Հայ-թուրքական սահմանին (հատկապես Նախիջևան-ՀՀ սահմանագծի հարևանությամբ) կենտրոնացվել էին 3-րդ դաշտային բանակի ստորաբաժանումները, մեծ քանակությամբ զրահատեխնիկա և ավիացիա, իսկ ՀՀ ՁՈւ-ում հայտարարվել էր պատերազմական իրավիճակ: Բախումն անխուսափելի կլիներ, եթե ԱՊՀ երկրների զինված ուժերի գլխավոր հրամա-

նատար, ավիացիայի մարշալ Ե.Շապոռնիկովը մայիսի 20-ին «Զվարթնոց» օդանավակայանում չհայտարարեր, որ «Էթե այնտեղ (հայ-ադրբեջանական հակամարտությանը) ավելանա ևս մեկ կողմ, ապա մենք կհայտնվենք Երրորդ համաշխարհային պատերազմի եզրին»:

Պատերազմական իրավիճակ էր ձևավորվել նաև 1993-ին, երբ Անկարան, հույս ունենալով, որ ՌԴ-ում ծագած ներքաղաքական ճգնաժամը («պառլամենտական խռովությունը» նախագահ Ելցինի դեմ) թույլ չի տա այդ տերությանը «գրադվել» հայ-թուրքական խնդիրներով, մեղադրեց ՀՀ-ին իր տարածքում քրդական զինյալների հենակետեր պահելու մեջ¹ և հերթական անգամ կենտրոնացրեց գորքերը սահմանին: Զարգացումներն ընթանում էին 1992-ի սցենարով, որոնք և համակողմանի ներկայացված են այն տարիներին ՀՀ-ում Հունաստանի դեսպան Լեոնիդաս Խրիզանտոպուլոսի հուշերում [1]: Մակայն ՌԴ կոշտ միջամտությունն այս անգամ ևս կանխեց պատերազմը:

Ինչպես տեսնում ենք, ՌԴ-ի հետ ձևավորված դաշնակցային-ռազմավարական հարաբերություններն էին, որ ապահովեցին մեր անվտանգությունը ոչ վաղ անցյալում: Հայտնի է նաև, որ ներկայիս Թուրքիայի քաղաքական դիրքորոշումները Հայաստանի նկատմամբ, ինչպես դա ցույց տվեց հայ-թուրքական վերջին բանակցությունների ընթացքը, ամենևին չեն փոխվել և լիովին պայմանավորված են ԼՂՀ և ադրբեջանական գործոններով: Ավելին. տպավորությունն այնպիսին է, որ Ադրբեջանի ներկայիս ռազմատենչ ծայրահեղականությունը պայմանավորված է առաջին հերթին թուրքական «ավագ եղբոր» խոստումներով և հորդորներով:

Հարկ է նկատել, որ այսօր Թուրքիան, գլոբալ հարթությունում ընթացող բազմաբևեռ համակարգի ձևավորման արդյունքում, ավելի պակաս է վերահսկվում ԱՄՆ-ի կողմից, քան նախկինում: Այդ հանգամանքը, ինչպես նաև ներքին քաղաքական դաշտում ռազմատենչ կայսերական, ազգայնամուլական և կրոնական գաղափարախոսական ուղղությունների (նեոսումանիզմ, նեոպանթոլոգիզմ և պանիսլամիզմ) զարգացումը², ինչպես նաև հիմնականում քրդական խնդրով պայմանավորված հայտնի գործընթացները դարձնում են Թուրքիան անկայուն և անկանխատեսելի, միևնույն ժամանակ ագրեսիվ մի երկիր, որը տեսանելի ապագայում շարունակելու է մնալ մեր ազգային անվտանգության առաջնային սպառնալիքը (տե՛ս նաև [2]):

¹ Հասկանալի է, որ «քուրդ զինյալների» խնդիրը ՀՀ-ում և ԼՂՀ-ում առայսօր պարբերաբար շահարկվում է թուրքական ՁԼՄ-ում:

² Huge Pope, Pax Ottomana? <http://foreignaffairs.com/print/66759>, Sunner Cagatay, Sultan of the Muslim World, http://foreignaffairs.com/print/66957?page_show

Վերոնշյալին զուգահեռ՝ պետք է նաև հաշվի առնել, որ ներկայումս արձանագրվող ամերիկյան նահանջը տարածաշրջանից կարող է հանգեցնել քառտիկ իրադրության Մեծ Մերձավոր Արևելքում, և դա լիովին վերաբերում է նաև Թուրքիային: Նման պարագայում հայ-ռուսական ռազմավարական դաշինքը որոշակի երաշխիք է, որ Հայաստանը ոչ միայն զերծ մնա անցանկալի սցենարներից, այլև իրագործի համատեղ գործողություններ ի նպաստ մեր ընդհանուր ազգային շահերի [3]:

ՀՀ ինքնիշխանության խնդիրը. Հայաստանում հայ-ռուսական հարաբերությունների շուրջ շարունակաբար ընթացող քննարկումներում շահարկվում է այն թեզը, թե «ռուսական կողմնորոշումը» և մասնավորապես 102-րդ ռազմակայանի ներկայությունը սահմանափակում են ՀՀ ինքնիշխանությունը: Այդ առիթով նկատենք, որ օտարերկրյա ռազմակայանների առկայությունը տարբեր երկրներում, որպես կանոն, ենթադրում է երկուստեք շահեր: Օրինակ, ԱՄՆ-ը այսօր աշխարհի տարբեր մասերում ունի, կախված հաշվարկման չափանիշներից, 600-800 ռազմակայան, որոնց մոտ կեսը գտնվում է Եվրոպայում: Մասնավորապես, 70 հազարից ավելի ամերիկյան զինծառայող տեղակայված է Գերմանիայում, 12 հազարական՝ Մեծ Բրիտանիայում և Իտալիայում, ամերիկյան ռազմակայաններ կան Բելգիայում, Իսպանիայում, Լեհաստանում և Եվրոպական այլ երկրներում¹: Սակայն այդ երկրների հանրությունները չեն համարում, որ դրանց առկայությունն ինչ-որ կերպ սահմանափակում է իրենց ինքնիշխանությունը:

Նշենք նաև, որ քննարկման առարկա դարձած ՀՀ ինքնիշխանության մակարդակը, շնորհիվ վարվող բազմակեցտոր արտաքին քաղաքականության, բավական վրա է: Մասնավորապես, «օտար երկրների միջամտությունից» կամ «արտաքին գործոններից» ՀՀ կախվածությունը, համաձայն «Foreign Policy Magazine» և «The Fund for Peace» հեղինակավոր կազմակերպությունների 2009թ. հրապարակած վարկանիշային տվյալների, էապես ցածր է տարածաշրջանային մեր հարևաններից²: ՀՀ-ի համար վերոնշյալ չափանիշներով հաշվարկված ցուցանիշը կազմում է 5.9, մինչդեռ Թուրքիայինը՝ 6.2, Ադրբեջանինը՝ 7.0 (որտեղ, ի դեպ, վարձակալական հիմունքներով գործում է ՌԴ Գաբալայի ռադարային համակարգը): Ամենաբարձրը Վրաստանի ցուցանիշն է՝ 9.5, այսինքն՝ այդ երկիրը կարելի է դասել «արտաքին կառավարում» ունեցող երկրների շարքին: Համեմատության համար նկատենք, որ Գերմանիայի (որտեղ, ինչպես արդեն նշել ենք, տեղակայված է ամերիկյան շուրջ 70 հազար

¹ Տե՛ս u, օրինակ, <http://www.gsvg.ru/usa-struktur.htm>

² http://www.fundforpeace.org/web/index.php?option=com_content&task=view&id=391&Itemid=549

զինծառայող) համապատասխան ցուցանիշը կազմում է 2.4:

Այսպիսով, ռազմակայանի տեղակայման և ինքնիշխանության խնդիրները ՀՀ-ում, ինչպես և այլ երկրներում, միմյանց հետ փոխկապակցված չեն:

Ադրբեջանական գործոնը. Հայ-ռուսական հարաբերությունների շուրջ ընթացող բանավեճերում հաճախ կարելի է լսել, թե Ռուսաստանի ռազմական ներկայությունը չի ապահովում ԼՂՀ անվտանգությունն Ադրբեջանի հետ հնարավոր պատերազմում: Անշուշտ, իրավաբանական տեսանկյունից ԼՂՀ-ն ՀՀ-ՌԴ պայմանագրերի հետ առնչություն չունի, և 102-րդ ռազմակայանն իրավասու չէ միջամտելու ԼՂՀ-Ադրբեջան հակամարտությանը: Սակայն փաստացի մոտեցումների պարագայում պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- Ի տարբերություն ՀՀ-Թուրքիա ռազմական ներուժերի հարաբերությանը, Ադրբեջանի և Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) ռազմական հնարավորությունները համադրելի են, այսինքն՝ հայկական կողմը կարող է նվազագույնը համարժեք պատասխան տալ Ադրբեջանի ոտնձգություններին:
- ԼՂՀ-Ադրբեջան հնարավոր ռազմական բախման պարագայում ՀՀ անվտանգության երաշխավորումը ՌԴ-ի կողմից կնպաստի նրան, որպեսզի ՀՀ-ն կենտրոնացնի ուժերը ԼՂՀ անվտանգության (որի փաստացի երաշխավորն է) ապահովման ուղղությամբ, քանի որ նկատելի չափով ձեռքագատված կլինի ոչ միայն ՀՀ-Թուրքիա, այլև ՀՀ-Ադրբեջան սահմանների պաշտպանության խնդիրներից:
- ՀՀ-ՌԴ պայմանագիրն ունի քաղաքական նշանակություն, և նման պայմանագրի առկայությունն արդեն իսկ նվազեցնում է պատերազմի հավանականությունը ԼՂՀ-ի դեմ: Այդ հանգամանքը լավագույնս ըմբռնել են Բաքվում, որտեղ պաշտոնական մակարդակով հայտարարում են, թե Մինսկի խմբի երկրի նախագահի կողմից կնքված պայմանագիրը չափազանց մեծ առավելություններ է տալիս Հայաստանին, և որ նման քայլը վկայում է Ռուսաստանի կողմնակալ դիրքորոշման մասին:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ռազմակայանի վերաբերյալ պայմանագրի ստորագրումը տեղի ունեցավ 2010թ. հուլիսին Դ.Մեդվեդևի միջնորդությամբ կայացած Սարգսյան-Ալիև պետերբուրգյան հանդիպումից ընդամենը երկու ամիս հետո: Ինչպես հայտնի է, այդ հանդիպումից անմիջապես հետո Ալիևը ցուցադրաբար լքեց Սանկտ Պետերբուրգը, ինչն էլ առիթ տվեց վերլուծաբաններին ենթադրելու, որ բանակցություններում ՌԴ նախագահն առա-

ջարկել է ադրբեջանական կողմին նոր և ոչ այնքան նպաստավոր մոտեցումներ (ունանք դրանք անվանեցին «պետերբուրգյան սկզբունքներ»)։ Այդ համատեքստում չի կարելի բացառել, որ Երևանյան պայմանագրի կնքումը յուրովի պատասխան էր Ադրբեջանի նախագահին՝ նրան ավելի հանդուրժողական դարձնելու նկատառումով։

Պատահական չէ նաև այն փաստը, որ ՌԴ նախագահի Երևան այցի նախօրեին Ադրբեջան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը, և կողմերը ստորագրեցին «Ռազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը¹։

Հայաստան - Ռուսաստան հարաբերությունները գլոբալ քաղաքականության համատեքստում. Համադրելով հայ-ռուսական և թուրք-ադրբեջանական պայմանագրերը՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ համաձայն ավանդական դարձած աշխարհաքաղաքական դրույթների (բավական է հիշել, որ 18-րդ դարից սկսած՝ Ռուսաստանը 12 պատերազմ է վարել Թուրքիայի դեմ)՝ մեր տարածաշրջանում նկատվում են քաղաքական բևեռների՝ ՌԴ–Հայաստան և Թուրքիա–Ադրբեջան, բյուրեղացման միտումներ։ Սա կարևոր հանգամանք է ապագա զարգացումների տեսակետից և կարծես թե հաստատում է այն վերլուծաբանական կանխատեսումները, համաձայն որոնց՝ միաբևեռից բազմաբևեռ աշխարհակարգի անցման փուլին բնորոշ «բաժանման» և «տրոհման» գործընթացները փոխարինվելու են քաղաքակրթական հատկանիշների վրա հենված ինտեգրացիոն գործընթացներով։ Այդ նույն համատեքստում պետք է դիտարկել նաև Մերձավոր Արևելքում նկատվող Թուրքիայի, Իրանի և Իսրայելի, ԱՄՆ-ի միջև հակասությունների խորացումը։

Նկատենք, որ տարածաշրջանում ձևավորվող նոր քաղաքական տրամաբանությունը պետք է որ մեղմի Ռուսաստանի և ԱՄՆ-ի ու ԵՄ-ի միջև տարբեր խնդիրների նկատմամբ նախկինում եղած երբեմն տրամագծորեն հակադիր դիրքորոշումները, և դրա վկայություններն են ս.թ. նոյեմբերին Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ՌԴ բանակցությունները և Աստանայում ԵԱՀԿ գազաթափոցովում Մինսկի խմբի երկրների ներկայացուցիչների համաձայնեցված հայտարարությունը։ Պատահական չէ նաև, որ ԼՂՀ-ի շուրջ ընթացող բանակցային գործընթացում որպես միջնորդ վերջին ժամանակահատվածում հանդես է գալիս բացառապես Ռուսաստանը, այսինքն՝ Մինսկի խումբը կարծես ՌԴ-ին է լիազորել խնդրի կարգավորումը, և դա համապատասխանում է ԱՄՆ-ի կողմից վարվող «տարածաշրջանացման» քաղաքականության տրա-

¹ <http://www.regnum.ru/news/armenia/1315425.html>

մաքանությանը: Ստեղծված իրադրությանը նպաստում է նաև այն հավասարակշռված քաղաքականությունը, որը ներկայումս վարում է ՀՀ-ն ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և եվրոպական երկրների հետ:

«Հայկական գործոնը» և Ռուսաստանի ազգային շահերը. Վերոնշյալ գլոբալ քաղաքական միտումների պարագայում արդի թուրքական ագրեսիվ քաղաքականությունն ուղղված է ոչ միայն Հայաստանի, այլ նաև Ռուսաստանի դեմ: Օրինակ, 2008թ., Հարավային Օսիայի շուրջ ռազմական գործողությունների ժամանակ, Թուրքիան, օգտվելով ստեղծված իրավիճակից, համաձայն WikiLeaks-ի բացահայտումների¹, պատրաստ էր իր գործերը մտցնել Աջարիա, իսկ ռազմական գործողությունների ավարտից հետո հանդես եկավ տարածաշրջանում նոր քաղաքական պլատֆորմ ստեղծելու առաջարկով: Այսօր այդ նախաձեռնության դրսևորումներն են Թուրքիա, Ադրբեջան և Վրաստան համադաշնություն ստեղծելու նախագիծը, ինչպես նաև Նախիջևանում ռազմակայանի տեղակայումը՝ կարծես որպես հակակշիռ ռուսաստանյան ռազմակայանի: Նշենք նաև, որ այսօրվա ադրբեջանական ռազմատենչությունը նույնպես զգալիորեն պայմանավորված է ԼՂՀ-ի հանդեպ Թուրքիայի կոշտ դիրքորոշմամբ: Սակայն խնդիրը միայն Հարավային Կովկասում ՌԴ-Թուրքիա շահերի բախումը չէ:

Հայտնի է, որ Թուրքիա-Ադրբեջան տանդեմը գաղափարապես և նյութապես աջակցում է Հյուսիսային Կովկասում, այսինքն՝ բուն Ռուսաստանի մարզերում գործող ահաբեկչական խմբավորումներին: Ակնհայտ է, որ Հայաստանն այն գործոնն է, որը խոչընդոտում է արմատական իսլամական շարժումների և ահաբեկչական կազմակերպությունների տարածաշրջանային միասնական ճակատի ստեղծմանը, որոնք ցանկանում են պառակտել Ռուսաստանը և նրա որոշ ազգությունների հետ շարտել միջնադարյան իրողությունների գիրկը: Ուշագրավ է նաև, որ ամերիկյան որոշ վերլուծաբանների փոքր-ինչ ֆանտաստիկ կանխատեսումներով՝ սահմանը Ռուսաստանի և Թուրքիայի միջև ապագայում կարող է անցնել Հյուսիսային Կովկասով [4]: Հայտնի է, որ նման հեռահար կանխատեսումները նպատակ ունեն վերհանելու այս կամ այն երկրում իշխող ռազմաքաղաքական նկրտումները: Նկատենք նաև, որ «հայկական գործոնը» յուրահատուկ զսպման մեխանիզմ է հանդիսանում Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի կողմից Ռուսաստանի հանդեպ այլ ոլորտներում վարվող քաղաքականությունում: Այսինքն՝ կարելի է փաստել, որ հայ-ռուսական ռազմավարական-դաշնակցային հարաբերություններն «աշխատում» են ոչ միայն ի նպաստ Հայաստանի, այլև կարևոր նշանակություն ունեն Ռուսաստանի համար:

¹ http://news.km.ru/v_2008-m_rossiya_i_turcziya_chut

Երկու երկրների շահերի ընդհանրության օրինակները կարելի է շարունակել: Սակայն իմաստ ունի նաև դիտարկել հայ-ռուսական հարաբերությունների այն հիմնախնդիրները, որոնք առկա են, մասնավորապես, տեղեկատվական և քաղաքագիտական-հետազոտական ոլորտներում: Դրանց անտեսումը կամ թերազնահատումը կհանգեցնի լուրջ հետևանքների արդեն ոչ հեռավոր ապագայում:

Հայ-ռուսական հարաբերությունների հիմնախնդիրները. Վերլուծաբանների մոտ երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները գործում են հիմնականում ռազմաքաղաքական, բայց ոչ ազգային-հասարակական հարթությունում: Այդ հիմնախնդիրը չպետք է դիտարկել զուտ ազգային հիշողության տեսանկյունից, այն ընդհանուր առմամբ դրական բնույթ է կրում, բայց այդ հիշողությունը սնունդ է առնում անցյալից, այնինչ հասարակություններն առաջ են ընթանում, և հետագա սերունդների մեջ այդ հիշողությունը կթուլանա, ըստ էության՝ այն արդեն թուլանում է:

Հայտնի է, որ տեղեկատվական պատերազմների պայմաններում, երբ հիմնական խնդիրը «սեփական քաղաքակրթական-մշակութային կողմի ներդրումն է թշնամու կամ բարեկամի հասարակությունում», փոխվում է և՛ հասարակության կառուցվածքը, և՛ նրա բովանդակությունը: Ընթանում է պերմանենտ «ազգաշինություն» (nation building), և ազգային հիշողության կարգի հասկացությունները երկրորդ պլան են մղվում, դրանք կարող են ընդհանրապես անհետանալ, եթե, իհարկե, անհրաժեշտ միջոցներ չձեռնարկվեն: Այս ամենը մի փոքր պարզունակացված մեկնաբանվում է որպես գլոբալացում, բայց իրականում արտահայտում է առանձին երկրների, վերազգային ֆինանսական ընկերությունների և այլոց շահերի գերակայությունն այլ պետությունների ազգային շահերի հանդեպ:

Ինչպես արդեն նշել ենք վերը, երկու երկրների հարաբերությունները հաճախ քննադատության են ենթարկվում այն ոգով, թե Ռուսաստանի միակցանկությունը Հայաստանին «ինքնիշխանությունից զրկելն է», իսկ համաձայն որոշ ռուսաստանյան լրատվամիջոցների՝ Հայաստանը ՌԴ-ի համար «բեռ է, կայսերական նոստալգիա»: Հատկանշական է, որ նման մտքերը հնչեցնում են ամենին էլ ոչ թե քաղաքական հավակնություններ ունեցող դիլետանտները, այլ միանգամայն պատրաստված փորձագետներ, «ուղեղային կենտրոնների» (ՈւԿ) ներկայացուցիչներ: Խնդիրն այստեղ այն չէ, որ բոլորս պետք է մտածենք միակերպ և անխտիր հավանություն տանք այն ամենին, ինչ կատարվում է հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում: Խնդիրն այստեղ դրդապատճառների հարթությունում է:

Այս առումով, շարունակելով «ուղեղային կենտրոնների» թեման՝ ընդգծենք, որ դրանք ազգային անվտանգության (ԱԱ) ինտելեկտուալ հիմքն են և խորհրդանշում են զարգացման գործընթացը [5]: Այդ առումով բնորոշ է, որ ՈւԿ-ների վարկանիշային տվյալների¹ համաձայն՝ ԱՄՆ-ում, այսինքն՝ ԱԱ բարձր մակարդակ ունեցող երկրում, գործում են մոտ 1800 ՈւԿ, ինչը կազմում է աշխարհի բոլոր ՈւԿ-ների ավելի քան 30%-ը: Եթե ամերիկյան ՈւԿ-ներին ավելացնենք նրանց հետ սերտ համագործակցող բրիտանական 280 ՈւԿ-ները, ապա կարելի է խոսել այս ոլորտում անգլոսաքսոնյան գերիշխանության մասին: Այնինչ Ռուսաստանում միայն 107 նման կառույց կա, իսկ Հայաստանում՝ 13, և հարցն այստեղ նույնիսկ թվաքանակը չէ:

Հայտնի է, որ Ռուսաստանի և Հայաստանի ՈւԿ-ների մի զգալի մասը հիմնվել է օտարերկրյա կազմակերպությունների կողմից: Այնինչ, համաձայն դասական սահմանման, այդ կառույցների առաքելությունն «ազգային շահեր արտադրելն է», իսկ մեր պարագայում դրանք «արտադրում են ոչ այն երկրների ազգային շահերը», որտեղ գտնվում են, այլ նրանցը, որտեղից ֆինանսավորվում են: Մասնավորապես, նման տիպի «ոչ ազգային» ՈւԿ-ներն են Ռուսաստանի և Հայաստանի համար կազմված վարկանիշների առաջատարները:

Նման իրադրությունում կարծես թե ակնհայտ է, որ ՀՀ-ն և ՌԴ-ն, որպես դաշնակից երկրներ, իրենց ընդհանուր անվտանգության ամրապնդման նպատակով պետք է համակարգեն և ուղղորդեն ազգային ինտելեկտուալ ռեսուրսները, որպեսզի դրանք լուծեն կողմերի համար հրատապ խնդիրները և «արտադրեն սեփական ազգային շահեր»: Մասնավորապես, ցանկալի է ձևավորել համատեղ աշխատանքային խմբեր՝ կազմված փորձագետներից և պետական կառույցների ներկայացուցիչներից (որպեսզի արդյունքները հնարավոր լինի ներմուծել որոշումների ընդունման մեխանիզմ), որոնք կգործեն ազգային անվտանգության ոլորտում որոշակի նախագծերի մշակման և իրականացման ուղղությամբ: Հիմնախնդիրներն այդ բնագավառում բավական շատ են, սակայն ներկայացնենք առավել կարևորություն ունեցողներից երկուսը:

Փոխընդունելի և փոխադարձաբար գրավիչ իմիջների՝ Հայաստանի և հայերի, Ռուսաստանի և ռուսաստանցիների կերպարների ձևավորում: Սա չափազանց հրատապ խնդիր է, քանի որ Ռուսաստանում ներկայումս տարածված է հայի՝ «կովկասյան ազգության անձ «խաչիկի», «մուլթ գործարքներ կատարողի» կերպարը, իսկ Հայաստանում ռուսի՝ «ֆաշիստի, ծայրահեղա-

¹ The Think Tanks and Civil Societies Programm, 2008,
http://www.sas.upenn.edu/irp/documents/2008_Global_Go_To_Think_Tanks.pdf,
http://www.foreignpolicy.com/files/2008_Global_Go_To_Think_Tanks.pdf

կանի» կերպարը, որը գազանություններ է անում և սպանում ըստ ազգային պատկանելության հատկանիշի: Ակնհայտ է, որ դաշնակիցներին նման իմիջներն անհարիր են: Ավելին, նման կերպարներն ավելի տեղին են այն ազգերի համար, որոնք ցանկանում են միմյանց հանդեպ ձևավորել «թշնամու կերպարը»:

Մինչդեռ իմիջի ստեղծումը տեղեկատվական անվտանգության կարևոր տարր է, և նման նախագծի մշակումը պահանջում է համակարգված աշխատանք և միջոցիսցիպլինար մոտեցում: Նախագծի իրականացումն անհնար է ինչպես առանց վարչական, այնպես էլ ազգային կապիտալի ռեսուրսների ներգրավման: Իսկ անհրաժեշտ իմիջի ձևավորումը կմերձեցնի մեր հասարակություններն ու համագործակցության նոր հեռանկարներ կբացի բոլոր ոլորտներում: Այսինքն՝ տեղեկատվական այս նախագծի համար կատարված ծախսերն անպայմանորեն կփոխհատուցվեն նաև նյութական առումով:

Համատեղ ռազմավարության մշակում: Հայաստանի և Ռուսաստանի համագործակցությունը բարդ աշխարհաքաղաքական գործընթաց է, որն անհնար է իրականացնել առանց լավ մտածված ռազմավարության կամ, ըստ չինական տերմինաբանության՝ «ապագայի զավթման»: Իր հերթին, արդիական ռազմավարության մշակումը ենթադրում է.

- Հայ-ռուսաստանյան հարաբերությունների անցյալի իմաստավորում (իսկ այնտեղ կան նաև հիմնախնդիրներ, որոնք մեր հասարակություններին պետք է ներկայացնել ողջամիտ մեկնաբանությամբ):
- Ներկա իրողությունների ադեկվատ իմաստավորում:
- Ապագայի առնվազն կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումներ ու սցենարային մշակումներ:

Այս վերջինի առիթով ևս մեկ անգամ նշենք, որ ապագան տարածաշրջանում պարունակում է ինչպես ռիսկեր (նկատի ունենալով գլոբալ հարթությունում միջկրոնական-միջքաղաքակրթական հարաբերությունների սրացման ներկայիս միտումները), այնպես էլ մեծ հնարավորություններ (հաշվի առնելով հնարավոր համընթաց «ռազմաքաղաքական քամին», օրինակ՝ աշխարհաքաղաքական առումով վերականգնվող Գերմանիայից) ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի համար: Հայտնի է նաև, որ ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկն անուշադրությունն էր կանխատեսային հետազոտությունների ոլորտի նկատմամբ, և այդ իսկ պատճառով տերության ղեկավարությունը չկարողացավ ադեկվատ գործել նոր իրավիճակներում [6]: Կանխատեսումները հատկապես կարևոր են ներկայիս անցումային շրջանում, երբ տեղի են

ունենում աշխարհաքաղաքական տեղաշարժեր և հաստատուն թվացող պատկերացումների ու աշխարհընկալումների կտրուկ փոփոխություններ:

Վերոնշյալ նախագծերի մշակումը թույլ կտա.

- փորձագիտական մակարդակով ձևավորել և այդպիսով արդյունավետ բնույթ հաղորդել Ռուսաստանի ու Հայաստանի քաղաքականությանը տարածաշրջանում՝ վերջինիս տակ հասկանալով նաև Միջին և Մերձավոր Արևելքի մի մասը,
- ստեղծել բարձրակարգ փորձագիտական հանրություն (հաշվի առնելով տեղեկատվական նախագծման և կանխատեսման հատուկ մեթոդների յուրացումն ու կիրառումը) և այդպիսով ձեռք բերել արժեքավոր մարդկային կապիտալ. դա ինքնին կլինի զարգացման ռազմավարության դրսևորում և այդպիսով կբարձրացնի Ռուսաստանի և Հայաստանի ԱԱ մակարդակները,
- օգտագործել հետազոտական աշխատանքի արդյունքում ձևավորված փորձագիտական խմբերը նաև այլ ռազմաքաղաքական խնդիրների լուծման համար:

Եվ ամենագլխավոր արդյունքը, թերևս, հետևյալն է. հայտնի է, որ ապագայի կանխատեսումները ձևավորում են այդ նույն ապագան, այսինքն՝ նման աշխատանքների իրագործումը որոշակի իմաստով կարդարացնի «ապագան մեր ձեռքերում է» արտահայտությունը:

Նոյեմբեր, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Chrysanthopoulos, L. T. (2002). *Caucasus Chronicles: Nation-building and Diplomacy in Armenia, 1993-1994* (No. 1). Gomidas Institute.
2. Միմավորյան, Ա. (2010). Գաղափարախոսական հոսանքները Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում. «Գլոբալիս Ազգային անվտանգություն», 4 (14), էջ 19-29.
3. Арутюнян, Г. (2010). Стратегия развития и геополитические сценарии. *21-й век*, (3 (15)), 3-13.
4. Джордж Фридман. Следующие 100 лет, М.: Коммерсантъ, 2010.
5. Հարությունյան, Գ., (2009). Ուղեղային կենտրոններ և ազգային անվտանգություն. *Հանրապետական*, 6(70), 1.
6. Егор Гайдар. *Гибель империи*. М.: Роспепн, 2007.

АРМЯНО-РОССИЙСКИЕ ОТНОШЕНИЯ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Гагик Арутюнян

Резюме

Армяно-российские союзнические отношения способствуют поддержанию стабильности и безопасности в регионах Южного и Северного Кавказа и тем самым соответствуют национальным интересам обеих сторон. Вместе с тем, как Россия, так и Армения должны с большим вниманием относиться к новым вызовам и наполнить традиционные отношения дополнительным интеллектуальным содержанием. В частности, в последние годы актуализировались вопросы информационной безопасности в контексте необходимости формирования взаимных положительных «имиджей» в информационном пространстве. Другой важной проблемой является совместная разработка обоснованной стратегии российско-армянских отношений с использованием современных методов прогнозирования и планирования. Решение этих и подобных задач на экспертном уровне подразумевает координацию исследовательских работ и создание совместных аналитических структур.